ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21-ը փետրվարի 2020 թ. N 41

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՌՈԶՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ ***որոշում եմ՝***

1. Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0012-0005-ից ծածկագրի տակ գտնվող 0.00663 հա բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 16.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի սրահը համարել Նոր Հաճն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Փոփոխել 07-006-0012-0005-ից կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.00663 հա բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:
3. Ընդունել ի գիտություն, որ՝

3.1 շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

3.2 շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3.3 շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):
5. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Տոռոզյան փողոց թիվ 10/49 :**
6. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
7. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Ժիրայր Վարազդատի Գևորգյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻՄԱՐԶ
ՆՈՐՀԱՃՆՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐՀԱՃՆ<ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 42

24-ը փետրվարի 2020թ.

ք. Նոր Հաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անուշ Նահապետյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Իսահակյան 5/21 հասցեում գտնվող 49ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 3295, 3296 անդորրագրերի դիմումատուն 2020թվականի համար կատարել է ՆորՀաճն համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 19-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդհոդվածի 1-ինմասի4-րդկետով՝***որոշում եմ.***

1.Տալ *Անուշ Նահապետյան ԱՁ-ին* (վկայական 80.1072310) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Իսահակյան 5/21 հասցեում գտնվող 49ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2020 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25-ը փետրվարի 2020 թ. N 43
Նոր Հաճն

ՀՈՂԱՆԱՍԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 կետով, 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Նոր Հաճն քաղաքի / բնակավայրի / գլխավոր հատակագիծը՝ հաշվի առնելով Սաշա Արսենի Սահակյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող ք. Նոր Հաճն, Ազատամարտիկների փողոց թիվ 11 հասցեում գտնվող անշարժ գույքի նպատակային և գործառական նշանակությունները Նոր Հաճն քաղաքի / բնակավայրի / գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ չեն կատարվում կոնստրուկտիվ փոփոխություններ, չկա անհրաժեշտություն շինարարության թույլտվություն տրամադրելու՝ ***որոշում եմ.***

1. Սաշա Արսենի Սահակյանին պատկանող / հիմք՝ 01022020-07-0053 վկայական/ ք. Նոր Հաճն, Ազատամարտիկների փողոց թիվ 11 հասցեում գտնվող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբեկտների կառուցապատման համար նախատեսված 70.0 քմ մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել Նոր Հաճն քաղաքի / բնակավայրի / գլխավոր հատակագծին՝ բնակավայրի նշանակության՝ բնակելի կառուցապատման:
2. Ազատամարտիկների փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 48.2 քմ ներքին մակերեսով արտադրական նշանակության շինության նպատակային նշանակությունը փոխել բնակելիի, գործառական նշանակությունը՝ ավտոտնակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սաշա Արսենի Սահակյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը փետրվարի 2020 թ. N 44
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ,48-րդ և 53-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Լյովա Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 533762, տրված՝ 10.06.2002թ./ հասարակական սպասարկման տարածքը վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Թումանյան փողոց, 7/1/6 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը փետրվարի 2020թ. N 45

Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՌՈՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի, Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ .***

1. Բագրատ Մելիքի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 07-006-0005-0129 կադաստրային ծածկագրի տակ գտնվող / վկայական՝ 07052018-07-0041/ Տոռոզյան փողոցի թիվ 43 հասցեի 0.04643 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման նշանակության:
2. Բագրատ Մելիքի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող հասարակական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 53.24 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կետը համարել օրինական:
3. Բագրատ Մելիքի Մելիքյանը պարտավոր է ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 223608 (երկու հարյուր քսաներեք հազար վեց հարյուր ութ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Ուժը կորցրած ճանաչել Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից հաստատված 2018 թվականի մայիսի 29-ի թիվ 2 շինարարության թույլտվությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է Բագրատ Մելիքի Մելիքյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2020թվականի N46

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ.փետրվարի 20-ի N6-Ա <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> և 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի բնակչի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել Գոհարիկ Հարությունյանին, ամուսնու՝ Տիգրան Հարությունյանի, թաղման ծախսերը հոգալու համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Մաթևոսյան

28.02.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 47

ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,46-րդ հոդվածի 2-րդ մասին պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Մարտի 8-ի՝ Կանանց տոնի համաքաղաքային միջոցառման կազմակերպման և անցկացման համար համայնքի 2020 թվականի բյուջեի գործառական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի 4237 <Ներկայացուցչական ծախսեր> հոդվածից հատկացնել 236800 դրամ, 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածից 259500 դրամ, 4269 <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածից 181700 դրամ և 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> ծախսերի տնտեսագիտական 4729 <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածից 520000 դրամ դրամական օգնություն՝ըստ հավելվածների:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ. Սիմոնյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 1
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի փտրվարի 28-ի N 47 որոշման

ՑԱՆԿ

2020 թվականի Մարտի 8- ի կապակցությամբ նորհաճնցինցի բազամազավակ ընտանիքների ներքոհիշյալ մայրերին դրամական օգնության

Հ/հ	անուն , ազգանուն	տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Գոհար Սիմոնայն	20000
2	Ռուզաննա Բաբասյան	20000
3	Անուշ Ժամկոչյան	20000
4	Ազգանուշ Մադոյան	20000
5	Գեղեցիկ Հարությունյան	20000
6	Գայանե Դալլաքյան	20000
7	Արմինե Թորոսյան	20000
8	Նարինե Սարգսայն	20000
9	Քնքուշ Առաքելյան	20000
10	Լեռնուհի Ասրյան	20000
11	Վարդուհի Արզումանյան	20000
12	Հերմինե Բաբաջանյան	20000
13	Գեղեցիկ Մկրտումյան	20000
14	Մարգարիտա Տոնոյան	20000
15	Լուսինե Գրիգորյան	20000
16	Սիրանուշ Մկրտչյան	20000

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի փտրվարի 28-ի N 47 որոշման

ՑԱՆԿ

2020 թվականի Մարտի 8- ի կապակցությամբ Արցախյան ազատամարտում զոհված ներքոհիշյալ նորհաճնցինցի ընտանիքների կանանց կամ մայրերին դրամական օգնության

Հ/հ	անուն , ազգանուն	տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Գայանե Պետրոսյան	20000
2	Հասմիկ Դալլաքյան	20000
3	Մարագարիտ Աբրահամյան	20000
4	Սոֆյա Գևորգյան	20000
5	Լաուրա Եղիազարյան	20000
6	Լյուբա Գասպարյան	20000
7	Արմինե Մանվելյան	20000
8	Ռիտա Երեմյան	20000

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 3
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի փտրվարի 28-ի N 47 որոշման

ՑԱՆԿ

2020 թվականի Մարտի 8- ի կապակցությամբ նորհաճնցինցի ամենատարեց բնակչուհուն (102 - ամյա) դրամական օգնության

Հ/հ	անուն , ազգանուն	տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Սիրանուշ Զոբանյան	20000

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 4
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի փտրվարի 28-ի N 47 որոշման

ՑԱՆԿ

2020 թվականի Մարտի 8- ի կապակցությամբ նորհաճնցինցի միակ կույր բնակչուհուն դրամական օգնության

Հ/հ	անուն , ազգանուն	տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Արև Գևորգյան	20000

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը մարտի 2020 թ. N 48
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՈՌՈԶՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10/49 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, հաշվի առնելով Ժիրայր Վարազդատի Գևորգյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի փետրվարի 28-ի N 28022020-07-0013 վկայական) Տոռոզյան փողոցի թիվ 10/49 հասցեում գտնվող 16.0 արտաքին (ներքին մակերեսը՝ 14.44 քառակուսի մետր) քառակուսի մետր արտաքին մակերեսով առևտրի սրահը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 66.3 քառակուսի մետր մակերեսով հասարակական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ժիրայր Վարազդատի Գևորգյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի հանդիսացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 18900 (տասնութ հազար ինը հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասինը՝ կադաստրային արժեքի եռապատիկի չափով 8820 (ութ հազար ութ հարյուր քսան) դրամ:

4. Ժիրայր Վարազդատի Գևորգյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 302400 (երեք հարյուր երկու հազար չորս հարյուր) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 396606 (երեք հարյուր ինսունվեց հազար վեց հարյուր վեց) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ժիրայր Վարազդատի Գևորգյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժիրայր Վարազդատի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՅՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը մարտի 2020թ. N 49

Նոր Հաճն

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ, ՏԱՐՈՆ ԵՎ ՏԱԹԵՎԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով ,Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18-ը մայիսի 2006 թվականի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը որ բնակելի տունը (անավարտ) կառուցվել է 1996 թվականին, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ Տիգրան Գառնիկի Կիրակոսյանի (ծնված՝ 10.12.1960թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Կարինե Սերյոժայի Գրիգորյանի, Տիգրան Գառնիկի, Տարոն Տիգրանի և Տաթևիկ Տիգրանի Կիրակոսյանների համատեղ սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող 07-006-0004-0001 կադաստրային ծածկագրով, 0.060 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխուներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.05.1992 թվականի թիվ 5 որոշմամբ), քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (նկարում են):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարույր Սևակ թաղամաս 4-րդ փողոց, թիվ 1 հասցե:**

4. Նոր Հաճն համայնքի Պարույր Սևակի թաղամասի 4-րդ փողոցի, թիվ 1 հասցեում գտնվող Կարինե Սերյոժայի Գրիգորյանի, Տիգրան Գառնիկի, Տարոն Տիգրանի և Տաթևիկ Տիգրանի Կիրակոսյանների համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 07-006-0004-0001 կադաստրային ծածկագրով, 0.060 հա օրինական հողամասի վրա կառուցված 157.38 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը (անավարտ) ճանաչել նշված անձանց սեփականություն:
5. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 4-րդ կետում նշված շինությունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոներին համապատասխան, չի հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04-ը մարտի 2020 թ. N 50

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Սամվել Իվանի Քեխվայանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տրամադրելով հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Չարենցի փողոց, շենք 1, բնակարան թիվ 10 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թվականի N51

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ.փետրվարի 20-ի N6-Ա <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> և 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի թվով երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000 (հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Մաթևոսյան

04.03.2020թ.
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05-ը մարտի 2020թ. N 52
Նոր Հաճն համայնք

ՍԱՇԱ ԱՐՍԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Սաշա Արսենի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի փետրվարի 28-ի N 28022020-07-0110 սեփականության վկայական) Նոր Հաճն համայնքի Ազատամարտիկների փողոցի թիվ 11 հասցեում գտնվող ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար առանձնացված 70.0 քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել նրան:
2. Տարածքը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
3. Սաշա Արսենի Սահակյանը պարտավոր է համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին մուծել 205800 (երկու հարյուր հինգ հազար ութ հարյուր) դրամ՝ հողամասի գինը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սաշա Արսենի Սահակյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05-ը մարտի 2020 թ. N 53

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ՋՈՒԼՖՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Միքայել Ռուբենի Լազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Միքայել Ռուբենի Լազարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2008 թվականի նոյեմբերի 14-ի N 2380188 և 2380187 վկայականներ) հողամասերը միավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ **Ս.Ջուլֆյան թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 6 հասցե**:
2. Միքայել Ռուբենի Լազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ս.Ջուլֆյան թաղամասի 6-րդ փողոցի 6 հասցեում գտնվող միավորված հողամասերում ինքնակամ կառուցված 293.06 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 12.54 քառակուսի մետր արտաքին մակերեսով մառանը, 29.0 քառակուսի մետր մակերեսով ծածկոցը և 35.84 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
3. Միքայել Ռուբենի Լազարյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 370.44 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 777924 (յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր քսանչորս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06-ը մարտի 2020թ. N 54

ՍՈՒՐԵՆ ԷԼԻԲԵԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Սուրեն Էլիբեկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը 13052019-07-0091/ Նոր Հաճն համայնքի, Շահումյան փողոցի, թիվ 1/1 հասցեի, 07-006-0025-0006-001 կադաստրային ծածկագիրի տակ գտնվող՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 118.2 քառակուսի մետր գեղեցկության սրահից՝ <<Ա/Ձ Ստյոպա Աբգարյան>>-ի կողմից տրված ըստ բաժանման հատակագծերի (կցվում են) համաձայն առանձնացնել առանձին հատվածներ:
2. Առաջացած հատվածները հասցեավորել՝

Հ/Հ	Բաժանված մասի հերթական համարը	Շինության մակերեսը /ք.մ./	Հասցե
1	*2*	*3*	*4*
1	S1 հատված	13.26	Շահումյան փողոց, թիվ 1/1
2	S2 հատված	10.60	Շահումյան փողոց, թիվ 1/1/1
3	S3 հատված	15.48	Շահումյան փողոց, թիվ 1/1/2
4	S4 հատված	56.42	Շահումյան փողոց, թիվ 1/1/3
5	S5 հատված	22.44	Շահումյան փողոց, թիվ 1/1/4

3.Փոփոխել S1,S2,S3 և S5 հատվածների շինությունների գործառական նշանակությունը գեղեցկության սրահից՝ որպես հասարակական սպասարկման տարածքների (ընդհանուրը՝ 61.78 քառակուսի մետր):
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրեն Էլիբեկի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06-ը մարտի 2020 թ. N 55
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԱՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած օժանդակ շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Աշոտ Վարդգեսի Պապիկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Վարդգեսի Պապիկյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի ապրիլի 23-ի N 23042018-07-0026 վկայական) Հարավ արևելյան թաղամասի 6-րդ փողոցի 14 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 12.69 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
2. Աշոտ Վարդգեսի Պապիկյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 12.69 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 26649 (քսանվեց հազար վեց հարյուր քառասունինը) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06-ը մարտի 2020 թ. N 56
Նոր Հաճն համայնք

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Աշոտ Պապիկյանի դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Աշոտ Պապիկյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Հարավ արևելյան թաղամասի 6-րդ փողոցի թիվ 14 հասցեում գտնվող բնակելի տան և քարե պարիսպի ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Պապիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 57

ՆՈՐ ՀԱՃՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Բյուջետային համակարգի մասին> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի /Հավելվածը կցվում է/:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին կատարել նախահաշվի համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020թ. մարտ 06
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի
ղեկավարի 2020 թվականի մարտի 6-ի
N 57 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵԽՈՒՄ

(հազար դրամ)

ՀՀ	բյուջետային ծախսը				հաստատված գումարը	ավելացում /+/ պակասեցում /-/	գումարը վերաբաշխումից հետո
	Գործառնական դասակարգում		Տնտեսագիտական դասակարգում				
	Անվանումը	ծածկագիր	Անվանումը	Հոդված			
1	Հանգիստ մշակույթ և կրոն	08.01.01	Էներգետիկ ծառայություններ	4212	600.0	-235.0	365.0
2	Հանգիստ մշակույթ և կրոն	08.01.01	Պարտադիր վճարներ	4823	0.00	235.0	235.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ